# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

19.05.2023 թվականին կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-23/24-1 ծածկագրով
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքի
մատակարարման պայմանագրի

ք. Մեծամոր «12» նոյեմբերի 2023թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ Բ. Սեդրակյանի, ով գործում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կանոնադրության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ձ. Եղիազարյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 19.05.2023թ. կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-23/24-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը» սյունակի նշված «Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացույցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացույցային օրվա ընթացքում» բառերով:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 | ՀՀ, 0001, ք.Երևան, Սայաթ-Նովայի պող., 19 շենք |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 1570083324940100 | Հ/Հ 1570030830430100 |
| ՀՎՀՀ 00000911 | ՀՎՀՀ 00179816 |
| գլխավոր տնօրենի ժ/պ------------------Բ. Սեդրակյան | տնօրեն-------------------Ձ. Եղիազարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |